ՆԵԼԼԻ ՄԻՆԱՍՅԱՆ. Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում (1991–2007 թթ.), *Երևան. «Լուսաբաց հրատարակչատուն», 2013, 240 էջ:*

Նելլի Մինասյանի մենագրության թեմայի ընտրությունը պայմանավորված է 1991 թվականից մինչև 2007 թվականը Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության հետ կապված խնդիրների համակողմանի ու հիմնավոր ուսումնասիրության անհրաժեշտությամբ, որն հասցեագրված է թուրքագետներին, քաղաքագետներին, պատմաբաններին և Թուրքիայի արտաքին քաղաքական գործընթացներով հետաքրքրվողներին: Խորհրդային Միության փլուզումից հետո աճեց հետաքրքրությունը կենտրոնասիական տարածաշրջանի նկատմամբ: Թուրքիան նույնպես մեծ ուշադրություն դարձրեց տարածաշրջանին՝ նպատակ ունենալով ռուսական ազդեցության սահմանափակման հաշվին մեծացնել իր դերակատարումը: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ ԽՍՀՄ-ի փլուզմամբ Թուրքիայի համար ստեղծվեց նպաստավոր աշխարհաքաղաքական իրադրություն Կենտրոնական Ասիայում իր ազդեցությունը հաստատելու համար, ինչին նպաստում էր Արևմուտքի քաղաքական աջակցությունը և վերոնշյալ տարածաշրջանում Ռուսաստանի Դաշնության ռազմաքաղաքական դիրքերի թուլացումը: Նման պայմաններում Թուրքիան կենտրոնասիական երկրների հետ հաստատեց բազմակողմանի համագործակցություն, որի կարևոր բաղադրիչն էին առևտրատնտեսական ու կրթամշակութային հարաբերությունները: Ըստ երևույթին, նման համագործակցությամբ Թուրքիան փորձում էր ձևավորել տնտեսական կամ մշակութային միություն, որը նեոպանթյուրքիզմի ժամանակակից տարատեսակներից է: Այս առումով ուշադրության է արժանի «թուրքական զարգացման նմուշաձևի» (ԹԶՆ) քաղաքականությունը: Այն իրենից ներկայացնում էր ազատ շուկայական տնտեսության, բազմակուսակցական համակարգի և աշխարհիկության գաղափարները, որոնց քարոզչությամբ թուրքական կառավարությունը փորձում էր իր ազդեցությունը տարածել կենտրոնասիական տարածաշրջանում:



Աշխատության առաջին գլխում՝ «Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում 1990-ական թվականների սկզբներին», հեղինակն անդրադարձել է ԽՍՀՄ-ի փլուզման առաջին տարիներին հետխորհրդային տարածաշրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաձևմանը և նրա գործունեության ակտիվացման նախադրյալներին ու դրանց նպաստող մի շարք գործոններին: Թուրքիայում առաջացավ այն մտավախությունը, որ ԽՍՀՄ-ի փլուզմամբ կկորցնի Արևմուտքի համար, սառը պատերազմով պայմանավորված, իր նախկին դերը, ուստի ղեկավար շրջաններն սկսեցին փնտրել Թուրքիայի արտաքին քաղաքական նոր կուրս՝ ավելի մեծ ուշադրություն հատկացնելով մահմեդական աշխարհին, հատկապես թյուրքալեզու երկրներին: Ուսումնասիրության նյութ է դարձել Կենտրոնական Ասիայում Թուրքիայի հետապնդած նպատակները և նրա մրցակցությունը ինչպես Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ Իրանի ու Չինաստանի հետ: Հանգամանորեն պարզաբանված են այն նախադրյալները, որոնք թույլ տվեցին Թուրքիային տարածաշրջանում ձևավորել առևտրատնտեսական հարաբերություններ և կատարել ֆինանսական ներդրումներ: Կենտրոնական Ասիայում հաստատվելու Թուրքիայի նպատակները արտահայտվեցին ԹԶՆ-ի կիրառմամբ: Հեղինակը մանրամասն քննության է առել դրա կիրառման սկզբնական հաջողությունների պատճառները, դրանցով պայմանավորված Կենտրոնական Ասիայի

երկրների դիրքորոշումը, ինչպես նաև Թուրքիայի վարած քաղաքականության ձախողման պատճառները:

Մենագրության երկրորդ գլխում՝ «Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում 1990-ական թթ. երկրորդ կեսին», հեղինակն անդրադարձել է Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության խնդիրներին և հեռանկարներին: Ն. Մինասյանը փորձել է նաև Թուրքիայում պարբերաբար տեղի ունեցող տնտեսական և քաղաքական ճգնաժամերի համապատկերում ցույց տալ թուրքական ընկերությունների և կազմակերպությունների տարածաշրջանային գործունեության հիմնական ուղղությունները: Թուրքիան փորձեց իր մասնակցությունն ունենալ կենտրոնասիական նավթի և գազի տեղափոխման հարցում՝ նպատակ ունենալով այս տեսանկյունից դառնալ տարանցիկ երկիր՝ կապելով Արևելքն ու Արևմուտքը: Նա սկսեց զարգացնել համագործակցությունը Կենտրոնական Ասիայի երկրների հետ կրթության և մշակույթի բնագավառներում: Առաջնորդվելով պանթյուրքիզմի գաղափարներով՝ թուրքական կողմը ցանկանում էր թյուրքալեզու երկրների հետ ձևավորել միասնական կրթական ու մշակութային համակարգ: Թուրքիայի կրթամշակութային քաղաքականության մյուս կարևոր խնդիրը դարձավ միասնական լատինատառ այբուբենի ընդունումը: Չնայած ձեռնարկված միջոցառումներին ու իրականացրած ծրագրերին՝ Թուրքիային չհաջողվեց հասնել այդ այբուբենի ընդունմանը: Կրթական համագործակցության համատեքստում ներկայացված է Կենտրոնական Ասիայում Ֆ. Գյուլենի համայնքի իրականացրած կրթական գործունեությունը՝ դպրոցների և համալսարանների հիմնում և այլն:

Աշխատության երրորդ գլխում, որը վերնագրված է «Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման շրջանում (2002–2007 թթ.)», ներկայացված են Կենտրոնական Ասիայում ԱԶԿ-ի վարած քաղաքականության հիմնական ուղղությունները և նպատակները: Թուրքական կառավարությունը ճգնաժամից դուրս գալով՝ ակտիվացրեց կենտրոնասիական երկրների հետ առևտրատնտեսական հարաբերությունները և շուտով դրանց ծավալները բավական աճ արձանագրեցին: ԱԶԿ-ի ղեկավարությունը շարունակեց թյուրքալեզու երկրների հետ համագործակցությունը կրթության ու մշակույթի բնագավառներում և շարունակեց հրավիրել թյուրքալեզու երկրների համագումարներ: Կարևոր է հեղինակի կողմից Կենտրոնական Ասիայում Թուրքիայի պանթյուրքիստական քաղաքականության նպատակների ու հետապնդած շահերի վերլուծման փորձը: Որպես պանթյուրքիզմի դրսևորումներ՝ անդրադարձ է կատարվել «Թուրքական համագործակցության և զարգացման գործակալության» ու Թյուրքալեզու երկրների գագաթնաժողովների գործունեությանը: Ցույց է տրված «թյուրք միասնության» գաղափարների տարածումը 1990-ական թվականներին և Թուրքիայի փորձը դրանք օգտագործել Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ընթացքում՝ փորձելով պաշտպանել Ադրբեջանի շահերը: Միաժամանակ Թուրքիան փորձեց 1990-ականների սկզբին պանթյուրքիզմի գաղափարներն օգտագործել Կենտրոնական Ասիայի երկրներում ապրող հայերի դեմ, սակայն այս երկրների ղեկավարների միջամտությամբ հակահայկական գործողությունները կասեցվեցին: Հարկ է նշել, որ կենտրոնականասիական տարածաշրջանում Թուրքիայի վարած քաղաքականությունը սպասված արդյունք չտվեց, ուստի որոշ բնագավառներում կարելի է ասել, որ Թուրքիայի նպատակները ձախողվեցին: Այնուհանդերձ, Թուրքիան ունեցավ նաև որոշակի հաջողություններ և ձեռքբերումներ, որոնք էլ ապահովեցին նրա ներկայությունը տարածաշրջանում:

Ավարտելով մեր խոսքը՝ ասենք, որ աշխատությունը մեծապես կշահեր, եթե ունենար նաև ռուսական լեզվով ամփոփում:

ԱՐՄԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ